Կազմված է 26.12.2017 թ. և բաղկացած է 3 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
20 դեկտեմբերի 2017 թ. թիվ 3707-Ա հրամանով

Առողջապահության նախարար՝

_____ Լ. Ալեքսանյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 05.09.1995 թ.,
գրանցման թիվ 264.140.01712
վկայական 01 Ա 016493
հարկ վճարողի հաշվառման համար՝ 00011624
29.04.2002 թ. գրանցված կանոնադրության
թիվ 006.3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կողմից "28" 12 2017 թ.

Պետական ռեգիստրի ղեկավար՝

_____ Գ. Դավթյան

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

փակ բաժնետիրական ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1. Կանոնադրության 1.1. կետից հետո ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թ. հոկտեմբերի 19-ի «Ն. Բ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունը «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությանը միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 1324-Ն որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «Ն. Բ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 04.07.2012 թ., պետական գրանցման համարը՝ 222.120.121236, հարկ վճարողի հաշվառման համար՝ 00878083, գտնվելու վայրի հասցեն՝ 0040, ՀՀ, ք. Երևան, Աճառյան փող., թիվ 2) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«Ն. Բ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» թիվ 260-Ա որոշման, Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետի 2012 թվականի հունիսի 8-ի «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունն առանձնացման ճանապարհով վերակազմակերպելու մասին» թիվ 4428-Ա որոշման համաձայն «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության (գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 19.03.2004 թ., գրանցման թիվ՝ 222.120.00271, հարկ վճարողի հաշվառման համար՝ 01002597) առանձնացման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան:»:

2. Ընկերության կանոնադրության 2.2. կետը լրացնել նոր ենթակետերով հետևյալ բովանդակությամբ.

«- Բժշկական օգնության և սպասարկման իրականացում,

- Բժշկական փորձաքննության իրականացում (այդ թվում՝ մասնագիտական հիվանդությունների աշխատորոշման նպատակով)՝ տալով համապատասխան վերջնական եզրակացություն,

- Գիտական, գիտաբժշկական, կլինիկական, հիգիենիկ և փորձարարական հետազոտությունների իրականացում՝ ինչպես ինքնուրույն, այնպես էլ այլ հիմնարկների ու կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերով:»:

3. Ընկերության կանոնադրության 4.2. կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **310,085,000** (երեք հարյուր տաս միլիոն ութսունհինգ հազար) դրամ, որը կազմում է 62,017 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 5,000 դրամ:

Բոլոր 62,017 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինն է՝ ՀՀ առողջապահության նախարարությունը:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերության 29.04.2002 թ. գրանցված կանոնադրության (փոփոխությունները գրանցվել են 25.09.2007 թ., 05.03.2010 թ., 25.02.2011 թ., 26.12.2011 թ. և 02.12.2015 թ.) բաղկացուցիչ մասը: